

*Ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակներ.*

- **Այն դեպքում, երբ ավանդը ներդրվել է 31 օր ժամկետով.**

Ավանդի գումար՝ 1,000,000.00 ՀՀ դրամ

Ավանդի ներդրման ամսաթիվ՝ 01.01.10

Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 5.5%

Տոկոսների վճարման առաջին ամսաթիվ՝ 01.02.10 (ավանդը գործել է 29 օր, չեն հաշվարկվում ավանդի ներդրման և վճարման ամսաթվերը)

Վճարվելիք տոկոսագումար= $1,000,000 * 5.5 / 100 / 365 * 29 = 4,369.86$

- **Այն դեպքում, երբ ավանդը ներդրվել է 91 օր ժամկետով և տոկոսների վճարման կապիտալացման եղանակով.**

Ավանդի գումար՝ 1,000,000.00 ՀՀ դրամ

Ավանդի ներդրման ամսաթիվ՝ 01.01.10

Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 6.5%

Գործողության ժամկետ՝ 91 օր

Տոկոսների կապիտալացման առաջին ամսաթիվ՝ 01.02.10

Վճարվելիք տոկոսագումար= $1,000,000 * 6.5 / 100 / 365 * 30 = 5,342.47$

Մայր գումար= $1,000,000 + 5,342.47 = 1,005,342.47$

Տոկոսների կապիտալացման երկրորդ ամսաթիվ՝ 01.03.10

Վճարվելիք տոկոսագումար= $1,005,342.47 * 6.5 / 100 / 365 * 28 = 5,012.94$

Մայր գումար= $1,005,342.47 + 5,012.94 = 1,010,355.41$

Տոկոսների վճարման ամսաթիվ՝ 01.04.10

Վճարվելիք տոկոսագումար= $1,010,355.41 * 6.5 / 100 / 365 * 31 = 5,577.72$

Մայր գումար= $1,010,355.41 + 5,577.72 = 1,015,933.13$

- **Այն դեպքում, երբ ավանդի գործողության ընթացքում կատարվում է մայր գումարի ավելացում և տոկոսները վճարվում են ամսեկան եղանակով.**

Ավանդի գումար՝ 1,000,000.00 ՀՀ դրամ

Ավանդի ներդրման ամսաթիվ՝ 01.01.10

Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 6.5%

Գործողության ժամկետ՝ 180 օր

Տոկոսների վճարման առաջին ամսաթիվ՝ 01.02.10

Վճարվելիք տոկոսագումար= $1,000,000 * 6.5 / 100 / 365 * 30 = 5,342.47$

01.02.10-ին ավանդի մայր գումարը ավելացել է 50,000.00 ՀՀ դրամով

Տոկոսների վճարման երկրորդ ամսաթիվ՝ 01.03.10

Վճարվելիք տոկոսագումար= $1,050,000 * 6.5 / 100 / 365 * 28 = 5,235.62$

Մնացած ամիսները հաշվարկվում են վերոնշյալ սկզբունքներով: